ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2023 թվականի N 150-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին օրենքի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանում ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով՝

1) Անանիկ Ոսկանյան՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար -Կոմիտեի նախագահ՝

2)Տիգրան Հակոբյան՝ <<ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ>> Փակ Բաժնետիրական Ընկերության ներքին աուդիտի ծառայության ղեկավար-կոմիտեի քարտուղար

3)Էմմա Յայլոյան՝ Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ-կոմիտեի անդամ

4)Գայանե Վարագյան՝ Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ-կոմիտեի անդամ

5)Նազենի Ռուբինյան՝ Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ- կոմիտեի անդամ

6)Էդգար Չթեյան՝ Առևտրի սպասարկումների և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ-կոմիտեի անդամ

7)Հայկանուշ Սիմոնյան՝ Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ- կոմիտեի անդամ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2023 թվականի N 151-Ա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդ կետով, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) ներքին աուդիտի ծառայության 2023 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացնել աուդիտորական առաջադրանքներ՝ համաձայն (հավելված N 1):
2. Աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել <<ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ> փակ բաժնետիրական ընկերության ներքին աուդիտորներ՝ Տիգրան Հակոբյանին, Սմբատ Աբովյանին և Արարատ Յարալյանին:
3. Աուդիտորական առաջադրանքներն իրականացնել՝ 2023 թվականի ընթացքում, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով Համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների կողմից՝ առնվազը 2022-2023 թվականների ընթացքում իրականացված գործառույթներն ու վերջիններիս վերաբերյալ կազմված փաստաթղթերը:
4. Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին՝ աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացը պատշաճ կարգով ապահովվելու նպատակով աջակցել աուդիտորներին, տրամադրելով պահանջվող փաստաթղթերի՝ բնօրինակները և/ կամ դրանց պատճենները, ներկայացնել տեղեկանքներ, պարզաբանումներ, բացատրություններ և այլն:
5. Աուդիտորական առաջադրանքի ընթացքում թույլատրել աուդիտորներին օգտվել էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված փաստաթղթերից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 23

Հավելված N 1
ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/78 գնանշման ծածկագրով
հարցման հրավերի
«09» Հունվար 2023թվական կնքված

1. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության բարելավմանը և ընդգրկում է կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները և կազմակերպության գործունեության արդյունքները, այսինքն՝ կազմակերպության ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները, գործընթացները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրներ, որի մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝ Կատարող) պետք է՝

- ✓ նկարագրի ներքին աուդիտի իրականացման հիմնական ոլորտները, աուդիտի ենթակա ստորաբաժանումների մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև աջակցությունը,
- ✓ կազմակերպության ղեկավարությանը պատշաճ գնահատական ներկայացնի կազմակերպության ներքին հսկողության համակարգի համապատասխանության, հուսալիության և արդյունավետության մասին,
- ✓ գնահատի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը՝ կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը,
- ✓ կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման (ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման) գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով աջակցի կազմակերպությանը վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում,
- ✓ հավաստիացնի կազմակերպության ղեկավարին (այսուհետ՝ Ղեկավար) և ներքին աուդիտի կոմիտեին, որ կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդնումը և պահպանումը),
- ✓ օժանդակի կազմակերպությանը լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
- ✓ օբյեկտիվ կարծիք տրամադրի վերահսկող մարմիններին Ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ,
- ✓ օժանդակի Ղեկավարին հասնել իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով կազմակերպության համակարգերը և ծառայությունները,
- ✓ իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
- ✓ ապահովի աուդիտորների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին,
- ✓ ապահովի իր առնվազն մեկ աշխատակցի մշտապես ներկայությունը կազմակերպությունում (բացառությամբ գյուղական համայնքների), որը պատասխանատու է ներքին աուդիտի օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջների կատարման համար,
- ✓ ապահովի «Ներքին աուդիտի մասին» օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը,

- ✓ կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները,
- ✓ հաշվետու լինի Ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,
- ✓ բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառույթներից, չիրականացնի կազմակերպության կառավարման որևէ գործառույթ:

Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքների արդյունքները պետք է ընդունվեն ի գիտություն և հաշվի առնվեն հետագա աշխատանքներում:

2. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, ընդգրկում կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները՝ (Գործառույթը կամ գործընթացը կազմակերպության նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է):

Աուդիտի միջավայրի տարրերը, որոնք կոչվում են միավորներ (այսուհետ՝ Միավորներ), ներառում են.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկի Համայնքապետարան
2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկի Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ)

3. ՁԵՌՔԲԵՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Կատարողը պարտավոր է Պայմանագիրը կնքելուց և պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումը այնպիսի ժամկետներում, որպեսզի մինչև համաձայնագրով նախատեսված գործողության ժամկետի ավարտը ապահովի սույն տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը.

2) Սույն բաժնի 1-ին կետով սահմանված պարտականության կատարման նպատակով Կատարողը պարտավոր է.

ա) կազմել և Ղեկավարի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգը և դրա փոփոխությունները, որում անհրաժեշտ է սահմանել այն դրույթները, որոնք ենթակա են պարտադիր կատարման ողջ կազմակերպության համար և պետք է արտացոլեն աուդիտի իրականացման բոլոր փուլերը և այն հարցերը, որոնք նպաստում են ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև Միավորների կողմից իրականացվող այն գործառույթները, որոնք ենթակա են ներքին աուդիտի.

բ) ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Ղեկավարի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա կազմել ներքին աուդիտի երեք տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ հիմք ընդունելով կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները (ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները), հստակ նշելով ներքին աուդիտի ենթակա Միավորների քանակը, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտների ժամկետները (հաճախականությունը), ելնելով առկա ռեսուրսներից աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները, որն էլ ելակետային հիմք կդառնա ռազմավարական ծրագրում ընդգրկված հաջորդող տարիների համար ներքին աուդիտի

ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնման ընթացակարգին գնային առաջարկի ներկայացման համար.

գ) իրականացնել արդյունավետ ներքին աուդիտ՝ գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

• կազմակերպության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում, մասնավորապես՝ Ղեկավարի կողմից կատարված ռիսկերի գնահատման հավաստիությունը, Ղեկավարի կողմից իրականացվող ռիսկերի դիտարկումը և արդյունքների ներկայացումը, ինչպես նաև ռիսկերի և հսկողության համակարգի հետ կապված խնդիրների լուծումը, Ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվություններն այն դեպքերի վերաբերյալ, երբ ռիսկերը գերազանցել են դրանց ընդունելի միջակայքը, և այդ հաշվետվություններին կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարների արձագանքը,

• Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

• տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

• տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

• կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

• առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

դ) տրամադրել.

• հավաստիացում առ այն, որ կազմակերպությունում առկա կառավարչական և իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացները համապատասխանում են/չեն համապատասխանում/մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին.

• հաստատում առ այն, որ ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են/չեն գործում արդյունավետ կերպով.

• հավաստիացում առ այն, որ ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները հուսալի են/հուսալի չեն.

• հաստատում առ այն, որ Ղեկավարը կազմակերպության այլ պաշտոնատար անձանցից ստանում է/չի ստանում/մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն.

• առաջարկություններ՝ ուղղված հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի բարելավմանը և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկմանը,

• եզրակացություն ենթակա Միավորների նկատմամբ հսկողության վերաբերյալ,

• եզրակացություն կազմակերպության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մակարդակով և ընդհանուր համակարգի հսկողության վերաբերյալ,

• եզրակացություն կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի վերաբերյալ, եթե այդ հսկողությունն էական է կազմակերպության նպատակների իրագործման համար.

ե) կազմել և Ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները.

• իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ, որը կներառի՝ ինչպիսի աշխատանք է կատարվել և որն է այդ աշխատանքների կատարման պատճառը, ներքին աուդիտի շրջանակներում հայտնաբերված բոլոր բացահայտումները և եզրակացությունները, կառուցողական առաջարկություններ՝ կազմակերպության գործունեությունը բարելավելու հարցում՝ Ղեկավարին օգնելու նպատակով.

• ներքին աուդիտի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն.

• տարեկան առնվազն մեկ անգամ ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները.

գ) իրականացնել վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող Միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով և պարզելու թե արդյոք աուդիտի ենթարկված Միավորի Ղեկավարը ձեռնարկել է իրավիճակը շտկող գործողություններ կամ իրագործել է ներկայացված առաջարկությունները, ձեռք են բերվել ցանկալի արդյունքները, թե Ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն իրենց վրա են վերցրել առաջադրանքի արդյունքներից բխող միջոցառումների չիրականացման ռիսկերը: Վերստուգման գործողությունները պետք է պատշաճորեն փաստաթղթավորվեն:

Կատարողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն առաջարկություններին, որոնց մասով ղեկավարությունն ստանձնել է մնացորդային ռիսկ, և պատշաճ կերպով փաստաթղթավորի այդ դեպքերը.

է) կազմակերպել աշխատանքային փաստաթղթերի պատշաճ փաստաթղթավորում և պահպանում.

ը) կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը, որը Ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագարգիռ կողմերին կտրամադրի հիմնավորված հավաստիացում, որ ներքին աուդիտը գործում է արդյունավետ և օգտավետ, իր կանոնակարգի համաձայն, որն իր հերթին համապատասխանում է «Ներքին աուդիտի մասին» օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին, ինչպես նաև ներքին աուդիտը դիտվում է որպես կազմակերպության գործառնությունները բարելավող գործունեություն.

3) ներքին աուդիտի համագործակցությունը այլ ներքին և արտաքին հավաստիացումներ տրամադրողների հետ.

ա) կատարողը պետք է համագործակցի ներքին հավաստիացումներ տրամադրողների հետ՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և գործողությունների կրկնությունը բացառելու նպատակով.

բ) Ղեկավարի հանձնարարությամբ Կատարողը պետք է համագործակցի Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում օրենքով սահմանված կարգով հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի հետ՝ նրանց աջակցելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

4) Կատարողը պետք է իրականացնի ներքին աուդիտ՝ հավաստիացման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով:

Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցությամբ:

Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվ ակտեր և այլն) կազմակերպության գործունեության համապատասխանությունը պարզելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին կազմակերպության գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից:

Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

4. ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կատարողը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ որպես «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին) պետք է տրամադրի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հետևյալ տեղեկատվությունը.

ա) «Ներքին աուդիտի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված Լիազոր մարմնի կողմից հրապարակված ցանկում ընդգրկվելու համար ներկայացված տեղեկություններում կամ փաստաթղթերում, այդ թվում՝ Կատարողի կամ դրա աշխատող համարվող ներքին աուդիտորների մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում այդ փոփոխությունների մասին տեղեկատվություն՝ դրանք ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում.

բ) ներքին աուդիտորներին վերապատրաստելու անհրաժեշտության և վերապատրաստման ծրագրի ուղղվածության մասին առաջարկություններ.

գ) ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ի գիտություն.

դ) հաջորդող տարվա տարեկան ծրագիրը՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը.

ե) հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով՝ ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

զ) ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը.

է) կազմակերպության կողմից հաստատված ներքին գնահատման ստուգաթերթերը և հարցաշարերը ու դրանցում կատարված փոփոխությունները՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

ը) ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ցանկալի է տարեկան ամփոփ հաշվետվության հետ մեկտեղ:

5. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ա) Կատարողը պետք է ընդգրկված լինի Լիազոր մարմնի կողմից վարվող՝ հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում,

բ) Կատարողի՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր,

գ) Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմելուց և անհրաժեշտ մարդկային ռեսուրսները հաշվարկելուց հետո՝ Կատարողն, անհրաժեշտության դեպքում, կարող է ներգրավել բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ: Նշվածի համար կատարողը պետք է ունենա ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող, բավարար քանակությամբ մարդկային ռեսուրսներ՝ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի ռիսկերի գնահատման

արդյունքներով կազմված ռազմավարական և տարեկան ծրագրերը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Կատարողը ներքին աուդիտի աշխատանքները պետք է կատարի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան և պահպանի ներքին աուդիտորի վարքագծի կանոնները:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կնքվելիք պայմանագրով ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է մինչև հաջորդ տարվա դեկտեմբերի 20-ը, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

Հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ մինչև հաջորդող առաջին ամսվա 15-րդ օրը: Հաշվետվությանը կից ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում մատուցված ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորման արդյունքը, ինչպես նաև գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է 5-րդ բաժնի բ) կետում նշված չափանիշներին բավարարող աշխատանքային ռեսուրսների կողմից:

Պատվիրատուի կողմից հաշվետվությունը քննարկվում և հաստատվում կամ առարկություններով կատարողին վերադարձվում է այն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը հաստատվում է կազմակերպության ղեկավարի որոշմամբ, որի հիման վրա այն կայացվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

Մատուցված ծառայության դիմաց վճարումներն իրականացվում են յուրաքանչյուր անգամ ներկայացված հաշվետվությունը հաստատվելու դեպքում՝ պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված ամսին:

Ընդ որում, եթե պայմանագրի գործողության ժամկետը չի ավարտվում տվյալ բյուջետային տարվա ընթացքում, ապա ծառայությունների մատուցման շարունակությունն ապահովելու նպատակով հաջորդող բյուջետային տարում կնքվող համաձայնագրով նախատեսվում է նաև, որ դրա պահանջները կիրառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա, իսկ վճարումն իրականացվում է այդ տարում ծառայության ձեռքբերման համար նախատեսված հատկացումների հաշվին:

7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

8. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպության գործառույթները սահմանված են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության վարչապետի _ որոշմամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով.

2) Հրավերով կարող է սահմանվել նաև, որ մասնակիցը գնային առաջարկին կից ներկայացնում է ծառայության մատուցման առանձին տարրերի միավոր գներ.

3) Կատարողին կտրամադրվեն կազմակերպության ներքին աուդիտի օրենսդրությունից բխող ներքին իրավական ակտերի օրինակները.

4) Կատարողին կտրամադրվեն կազմակերպության տարեկան և եռամյա ռազմավարական ծրագրերը.

5) Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ թվում հետևյալ իրավական ակտերով.

I. «Ներքին աուդիտի մասին» օրենք.

II. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշում.

III. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն հրաման.

IV. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրաման.

V. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրաման.

VI. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշում.

VII. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 1050-Ն հրաման.

VIII. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրաման.

IX. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի N 896-Ն որոշում.

X. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշում.

XI. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541-Ն հրաման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 152-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 88-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 89-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետություն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքում գտնվող Արևհատ Հովհաննեսի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կառուցված ինքնակամ կառույցներն օրինականացնելու մասին» թիվ 88-Ա և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքում գտնվող Արևհատ Հովհաննեսի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կառուցված ինքնակամ կառույցներն օրինականացնելու մասին» թիվ 89-Ա որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևհատ Հովհաննեսի Աբրահամյանի կողմից լիազորված Մարո Նորայրի Ավետիսյանին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 153-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՏ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՍԱՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 8-րդ կետով, 9-րդ, 11-րդ, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, հիմք ընդունելով 2003 թվականի նոյեմբերի 3-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի N 1273837 վկայականը և Աշոտ Մերուժանի Սարոյանի 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 730 դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք գյուղում գտնվող Աշոտ Մերուժանի Սարոյանին(ծնված՝1964 թվականի դեկտեմբերի 24-ին) սեփականության իրավունքով պատկանող, 08-087-0011-0007 կադաստրային ծածկագրով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք. գյուղ Նոր Կյանք 1-ին փողոց 42 բնակելի տուն հասցեն:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք գյուղի 1-ին փողոց 42 բնակելի տուն հասցեում գտնվող, Աշոտ Մերուժանի Սարոյանին սեփականության իրավունքով պատկանող, 08-087-0011-0007 կադաստրային ծածկագրով հողատարածքում ինքնակամ կառուցված 82,1 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 22,4 քմ արտաքին մակերեսով ջրավազանը, 11,3 քմ արտաքին մակերեսով պարիսպը, 9,2 քմ արտաքին մակերեսով պարիսպը, 6,3 քմ արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3.Ընդունել ի գիտություն, որ

1)Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2)Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

4.Սահմանել, որ սեփականատերը

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկ համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է վճարի 68854 (վաթսունութ հազար ութ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ շինության օրինականացման վճարը:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5.60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Մերուժանի Սարոյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 154-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 3-րդ ենթակետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, 0.00080 հա մակերեսով, 08-002-0072- կադաստրային ծածկագրով համայնքապատկան հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ, Անկախության փողոց, 24/2 կրպակ հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 155-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԻՔԱՅԵԼ ՂԵՎՈՆԴԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ,ՀԵՐՄԻՆԵ ՊՈՂՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Միքայել Ղևոնդի Դավթյանի 2023 թվականի հունվարի 19-ի թիվ 381 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Անուշավան գյուղում Միքայել Ղևոնդի Դավթյանին(ծնված՝ 1964 թվականի մարտի 18-ին),Հերմինե Պողոսի Կարապետյանին(ծնված՝ 1971 թվականի սեպտեմբերի 26-ին) և Հասմիկ Միքայելի Դավթյանին (ծնված՝ 1991 թվականի հունվարի 14-ին) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով(գրանցամատյան թիվ 2663) փաստագրված, Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի, Անուշավան գյուղում գտնվող 08-014-0010-0011 կադաստրային ծածկագրով, 0,096հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Անուշավան 35-րդ փողոց 10/2 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԻՔԱՅԵԼ ՂԵՎՈՆԴԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ,ՀԵՐՄԻՆԵ ՊՈՂՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Միքայել Ղևոնդի Դավթյանի 2023 թվականի հունվարի 19-ի թիվ 381 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Անուշավան գյուղում Միքայել Ղևոնդի Դավթյանին(ծնված՝ 1964 թվականի մարտի 18-ին),Հերմինե Պողոսի Կարապետյանին(ծնված՝ 1971 թվականի սեպտեմբերի 26-ին) և Հասմիկ Միքայելի Դավթյանին (ծնված՝ 1991 թվականի հունվարի 14-ին) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով(գրանցամատյան թիվ 2663) փաստագրված, Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի, Անուշավան գյուղում գտնվող 08-014-0020-0007 կադաստրային ծածկագրով, 0,121հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Անուշավան 16-րդ փողոց 23 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԷԴԻԿ ԵՐՎԱՆԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Էդիկ Երվանդի Հակոբյանի 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 886 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Անուշավան գյուղում Էդիկ Երվանդի Հակոբյանին (ծնված՝ 1981 թվականի հունվարի 23-ին) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1274781 վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի, Անուշավան գյուղում գտնվող 08-014-0126-0033 կադաստրային ծածկագրով, 0,10հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Անուշավան 46-րդ փողոց 5 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 158-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇ ԳՅՈՒՂՈՒՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՐՍԵՂԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՍՐԱՊԻՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Խաչատուր Բարսեղի Հարությունյանի 2023թվականի փետրվարի 10-ի N 876 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ գյուղում Խաչատուր Բարսեղի Հարությունյանին (ծնված 1957 թվականի օգոստոսի 16-ին), Հայաստան Սրապիոնի Հարությունյանին (ծնված 1957 թվականի հունվարի 25-ին) և Գևորգ Խաչատուրի Հարությունյանին (ծնված 1988 թվականի փետրվարի 28-ին) 2002թվականի հուլիսի 31-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 362696/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Փոքր Մանթաշ գյուղում գտնվող 08-115-0006-0019 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Փոքր Մանթաշ 4-րդ փողոց 10/1 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 159-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎՇԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՆՈՒԿ ԺՈՐԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏԻՉԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Մանուկ Ժորայի Ալեքսանյանի 2023թվականի վարի 15-ի N 1034 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Արևշատ գյուղում Մանուկ Ժորայի Ալեքսանյանին (ծնված 1964 թվականի ապրիլի 10-ին) և Մարինե Մկրտիչի Ալեքսանյանին (ծնված 1969 թվականի օգոստոսի 23-ին) 2003թվականի մայիսի 05-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 1365037/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արևշատ գյուղում գտնվող 08-021-0044-0043 կադաստրային ծածկագրով հողամասին և անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Արևշատ 1-ին փողոց, 1-ին նրբանցք 3 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 160-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ 29-ՐԴ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐՍԵՍ ԳՈՒՐԳԵՆԻ ՋՆԴՈՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՆԻԿՈԼԱՅԻ ՋՆԴՈՅԱՆԻ, ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍԻ ՋՆԴՈՅԱՆԻ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԳՈՒՐԳԵՆԻ ՋՆԴՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղի բնակիչ Ներսես Գուրգենի Ջնդոյանի 2023 թվականի փետրվարի 08-ին N 842 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում գտնվող 08-113-0051-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,15687հա մակերես, որը օգտագործում է Ներսես Գուրգենի Ջնդոյանը (ծնված 1955 թվականի հուլիսի 19-ին), Անահիտ Նիկոլայի Ջնդոյանը (ծնված 1960 թվականի հունվարի 01-ին), Լևոն Պետրոսի Ջնդոյանը (ծնված 1982 թվականի մարտի 22-ին) և Անահիտ Գուրգենի Ջնդոյանը (ծնված 2006 թվականի հոկտեմբերի 11-ին): 0,15687հա մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, /ըստ օրենքի 2023թվականի փետրվարի 07-ի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրը՝ գրանցամատյան թիվ 729, թիվ 730/ և Ներսես Գուրգենի Ջնդոյանի, Անահիտ Նիկոլայի Ջնդոյանի, Լևոն Պետրոսի Ջնդոյանի և Անահիտ Գուրգենի Ջնդոյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Փանիկ գյուղի 29-րդ փողոց 3-րդ փակուղի 4 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Փանիկ գյուղի 29-րդ փողոց 3-րդ փակուղի 4 բնակելի տուն:

2.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղի 29-րդ փողոց 3-րդ փակուղի 4 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ներսես Գուրգենի Ջնդոյանի, Անահիտ Նիկոլայի Ջնդոյանի, Լևոն Պետրոսի Ջնդոյանի և Անահիտ Գուրգենի Ջնդոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ սեփականության իրավունքով պատկանող 0,15687հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,15687հա մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված շենք-շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարաի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ներսես Գուրգենի Ջնդոյանին, Անահիտ Նիկոլա[illegible] Ջնդոյանին, Լևոն Պետրոսի Ջնդոյանին և Անահիտ Գուրգենի Ջնդոյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 161-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ԹԻՎ 498 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Ալվարդ Աղասիի Ղազարյանի 2023 թվականի փետրվարի 17-ի N 1077 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Արթիկի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 27-ի <<Արթիկ քաղաքի բնակիչ Ալվարդ Արտավազդի Ղազարյանի Շինարարների 9 շենքի թիվ 12 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց իրեն հատկացնելու մասին>> N 498 որոշման մեջ <<Ալվարդ Արտավազդի Ղազարյան>>-ի փոխարեն գրել <<Ալվարդ Աղասիի Ղազարյան>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 162-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄԶԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՅԱՆԻ, ՀԱՅԿ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՅԱՆԻ, ԱՐԱՄ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՅԱՆԻ ԵՎ ՆԱՌԱ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի բնակիչ Հայկ Սեյրանի Հարոյանի 2022 թվականի դեկտեմբերի 30-ին N 6536 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղում գտնվող 08-093-0003-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,10521հա մակերես, որը օգտագործում են Սեյրան Գուրգենի Հարոյանը (ծնված 1950 թվականի հոկտեմբերի 02-ին), Հայկ Սեյրանի Հարոյանը (ծնված 1975 թվականի հունվարի 11-ին), Արամ Սեյրանի Հարոյանը (ծնված 1977 թվականի օգոստոսի 12-ին) և Նառա Սեյրանի Հարոյանը (ծնված 1978 թվականի նոյեմբերի 01-ին): 0,10521հա մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, /ըստ օրենքի 2022թվականի փետրվարի 24-ի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցամատյան թիվ 840/ և Սեյրան Գուրգենի Հարոյանի, Հայկ Սեյրանի Հարոյանի, Արամ Սեյրանի Հարոյանի և Նառա Սեյրանի Հարոյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Պեմզաշեն գյուղի 13-րդ փողոց 24 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Պեմզաշեն գյուղի 12-րդ փողոց 24 բնակելի տուն:

2.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի 12-րդ փողոց 24 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սեյրան Գուրգենի Հարոյանի, Հայկ Սեյրանի Հարոյանի, Արամ Սեյրանի Հարոյանի և Նառա Սեյրանի Հարոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ սեփականության իրավունքով պատկանող 0,10521հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,10521հա մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված շենք-շինությունների նկատմամբ:

3.Հողամասում 2001 թվականից հետո կառուցված շենք-շինությունները ճանաչել ինքնակամ:

4.Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարաի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեյրան Գուրգենի Հարոյանին, Հայկ Սեյրանի Հարոյանին, Արամ Սեյրանի Հարոյանին և Նառա Սեյրանի Հարոյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 163-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂՈՒՄ ՆՎԱՐԴ ՈՍԿԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՀՐԱՉԻԿ ԺՈՐԺԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԷԼՅԱ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԳԵՎՈՐԳ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գևորգ Հրաչիկի Սարգսյանի 2023թվականի փետրվարի 08-ի N 858 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Գեղանիստ գյուղում Նվարդ Ոսկանի Սարգսյանին (ծնված 1930 թվականի հունվարի 20-ին), Հրաչիկ Ժորժիկի Սարգսյանին (ծնված 1963 թվականի հունիսի 19-ին), Էլյա Ազատի Սարգսյանին (ծնված 1970 թվականի հունիսի 24-ին), Գևորգ Հրաչիկի Սարգսյանին (ծնված 1990 թվականի հունվարի 01-ին) և Արմինե Հրաչիկի Սարգսյանին (ծնված 1991 թվականի փետրվարի 20-ին) 2003թվականի մարտի 04-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 343756/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Գեղանիստ գյուղում գտնվող 08-030-0011-0014 կադաստրային ծածկագրով 0,181հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Գեղանիստ 5-րդ փողոց 3-րդ նրբանցք 2/1 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2023 թվական փետրվարի 27